ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԻՐԱՃ ՆԱԽԱԳԻԾ

/ԱՐԴՅՈՒՆՔԱՀԵՆ ՁԵՎԱՁԱՓՈՎ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի՞ՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, ՏԻՄ-երի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակիչներին, թե ՏԻՄ-երն ինչպե՞ս են արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2020թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2016- 2021թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2020թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- ✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
- ✓ Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,
- ✓ Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
- ✓ Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ,
- ✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,
- ✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,
- ✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2020թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2020թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2020թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը, 341698.1

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ



Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	341698.1	100.0
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	85817.0	25.1

2.	Պաշտպանություն	100	0.01
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	300	0.03
4.	Տնտեսական հարաբերություններ	35685.8	10.4
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	53280.0	15.6
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	23300.0	6.8
7.	Առողջապահություն	0	0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	4550.0	0.04
9.	Կրթություն	107863.0	31.4
10.	Սոցիալական պաշտպանություն	700,0	0,07
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	3010.3	0.9

Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

հազար դրամ



ԻՆՉ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

հազար դրամ

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Ծրագիր	Գումար
Սևակի1,3,5 եՄիկոյանի10,11,12 բազմաբնակարան շենքերով պարփակված բակի նորոգում	40787050

Ոլորտ 2. Ճանապարհային տնտեսություն

Ծրագիր	Գումար
Ալավերդյան փողոցի եԿամոյի փողոցի /Երևանյան խաչուղուցմինչև Անդրանիկի փողոց/նորոգում	68413200
Չարենցի/Ավագյան փողոցից մինչև Թամանցիների փողոցի խաչմերուկ/ եԹամանցիների փողոցի/Թամանցիներ-Բաղդասարյան փողոցների խաչմերուկ/նորոգում	16828940

Ոլորտ 3. Փողոցային լուսավորություն

Ծրագիր	Գումար
Բաղդասարյան փողոցի,Կամոյի/Երևանյան խաչուղուց մինչևՎ Գևորգյան/Աթարբեկյան /Միասնիկյան-Արսենյան խաչմերուկից 280մ /փողոցների լուսավորության ցանցի կառուցում	21728140
Նոր Ավանթաղամասի լուսավորության ցանցի կառուցում/Այգեձորի փողոց,Այգեձորի 1-ին նրբ. Սյունիքի 1-ին նրբ. Պռոշյան փողոց Պռոշյանի 1-ին և2-րդ նրբանցքներ/	25574600